Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
սեպտեմբերի 18-ի N 1337 - Լ որոշման

ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԵՎ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՊԼԱՆԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համաճարակի և համավարակի պատրաստվածության և արձագանքման պլանով (այսուհետ՝ պլան) կարգավորվում են համաճարակի և համավարակի ներուժով նոր գրիպի կամ այլ շնչառական ախտածինով պայմանավորված հիվանդությունների (այսուհետ՝ շնչառական վարակ) պատրաստվածության և արձագանքման հանրային առողջապահական միջոցառումները, պատրաստվածության և արձագանքման գործողությունները՝ համաճարակից և համավարակից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո:

2. Վերջին երկու տասնամյակների ընթացքում համավարակները հիմնականում պայմանավորված են եղել շնչառական ախտածինով և հավանականությունը շատ մեծ է, որ հաջորդ համավարակները ևս կարող են պայմանավորված լինել համաճարակաբանական ներուժ ունեցող նոր առաջ եկող կամ վերադարձող այլ շնչառական ախտածիններով:

3. Պլանը կիրառվում է համաճարակի և համավարակի ներուժով ցանկացած շնչառական վարակի դեպքում:

4. Պլանում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Հանրային առողջապահության մասին» օրենքով սահմանված իմաստով:

5. Պլանի մշակման համար օգտագործվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) կողմից 2024 թվականին մշակված «Նոր սպառնալիքների նկատմամբ պատրաստվածության և կայունության ապահովում» ուղեցույցի՝ «Շնչառական հիվանդությունների համավարակների նկատմամբ պատրաստվածության ապահովման միջոցառումների պլանավորում» 1-ին մոդուլը, որը նախատեսված է համաճարակի և համավարակի յուրաքանչյուր փուլի (ժամանակահատվածի) համար:

6. Պլանում հաշվի են առնված պետության հնարավորությունները հիվանդությունների հայտնաբերման և կանխարգելման, ինչպես նաև հանրային առողջության ռիսկերին արագ

արձագանքելու վերաբերյալ գնահատման գործընթացում բացահայտված ուժեղ կողմերը, խնդիրները և առաջնահերթ գործողությունները:

ԳԼՈՒԽ 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Պլանի նպատակներն են նվազագույնի հասցնել՝

1) շնչառական վարակի փոխանցումը, հիվանդացությունը և մահացությունը.

2) առողջապահական համակարգի բեռը և նախապատրաստվել մեծացնելու հետագայում իրականացվելիք միջոցառումների ծավալը.

3) համավարակից տուժած անձանց շրջանում սոցիալական ցնցումները, ինչպես նաև ապահովել հանրության տեղեկատվության տրամադրումը համավարակի դեմ պայքարի ստանդարտ նախազգուշական միջոցառումների վերաբերյալ:

8. Պլանի խնդիրներն են՝

1) նվազեցնել շնչառական վարակով պայմանավորված համավարակի ռիսկը՝ ներառյալ ախտածնի փոխանցման, հիվանդացության, մահացության և սոցիալ-տնտեսական բեռի հետևանքները.

2) պլանի յուրաքանչյուր փուլի ընթացքում ապահովել արտակարգ իրավիճակների համակարգման, համընդհանուր համաճարակաբանական դիտարկման, բնակչության պաշտպանության, բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև հակազդման գործողությունների համար անհրաժեշտ միջոցներ.

3) ապահովել բնակչության պատշաճ իրազեկումը, համագործակցությունը հանրության հետ և հզորացնել ազգային և տեղական մակարդակներում կարողությունները՝ առավելագույնի հասցնելու հանրության դիմակայումը համաճարակին և համավարակին:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

9. Պլանի գործողությունները մշակվել են համաճարակի և համավարակի յուրաքանչյուր ժամանակաշրջանի և գործառնական փուլի կարիքներին համապատասխան, որը ներկայացված է պլանի Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

NN ը/կ	Ժամանակաշրջանը	Գործառնական փուլը
1.	Միջհամաճարակային կամ միջհամավարակային	Պատրաստվածություն
2.	Դեպքի և կլաստերի հայտնաբերում	Արագ արձագանքում
3.	Վարակի կայուն փոխանցում	Արձագանքում
4.	Իրավիճակի կայունացում	Վերականգնում

10. Միջհամաճարակային և միջհամավարակային՝ նախորդ համավարակի ավարտից մինչև նոր համավարակի սկիզբն ընկած ժամանակաշրջան: Այս ժամանակաշրջանում իրականացվող գործողությունների նպատակն է ապահովել պատրաստվածությունը համաճարակի և համավարակի արձագանքին և կանխել շնչառական վարակի՝ երկիր ներթափանցումն ու տարածումը:

11. Դեպքի կամ կլաստերի հայտնաբերում՝ համաճարակային և համավարակային ներուժ ունեցող շնչառական վարակի դեպքի արձանագրում երկրից դուրս կամ երկրի ներսում, որի ժամանակ սկսվում է արագ արձագանքման գործառնական փուլը: Սա այն ժամանակաշրջանն է, երբ ԱՀԿ-ի կողմից հաղորդվում է որևէ երկրում շնչառական վարակի դեպքի մասին, կամ Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվում են շնչառական վարակի եզակի (սպորադիկ) դեպքեր կամ կլաստերներ: Այս փուլում արձագանքը հիմնականում ուղղված է վարակի փոխանցման շղթան ընդհատելուն և պահանջում է դեպքերի վաղ հայտնաբերում՝ թեստավորման միջոցով, վարակի կասկածով անձանց, ինչպես նաև հնարավոր վարակակիրների, կոնտակտավորների հայտնաբերում, մեկուսացում և օբսերվացիա, ինչպես նաև հնարավոր այլ կանխարգելիչ ու հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների իրականացում:

12. Վարակի կայուն փոխանցում՝ շնչառական վարակի մարդուց մարդ կայուն փոխանցում, երբ դեպքերն այլևս հնարավոր չէ կապել հստակ փոխանցման շղթայի հետ: Վարակի տարածման կանխման գործողությունների վերաբերյալ որոշումների կայացումը հիմնվում է շնչառական վարակի համաճարակային իրավիճակի և դեպքերի տարածման ռիսկի գնահատման վրա:

13. Իրավիճակի կայունացում՝ գործնական տեսանկյունից սա նշանակում է արձագանքման աստիճանական կրճատում՝ միևնույն ժամանակ պահպանելով շնչառական վարակի երկարաժամկետ դիտարկումը և հետևանքների մեղմացման միջոցառումների իրականացումը: Իրավիճակի կայունացումից հետո կրկին սկսվում է միջհամաճարակային և միջհամավարակային շրջանը:

ԳԼՈՒԽ 4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

14. Պլանի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները կտրամադրվեն առանձին պետական կառույցների, առողջապահական հաստատությունների տարեկան բյուջեներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պարզեցված ընթացակարգերով, ինչպես նաև դոնորների միջոցներից: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորումը կիրականացվի համապատասխան գերատեսչությունների գծով տարեկան բյուջեներով իրենց լիազորությունների համար նախատեսված ընդհանուր հատկացումների հաշվին: Արտակարգ և ճգնաժամային իրավիճակների դեպքում պլանից բխող միջոցառումների ֆինանսավորումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին և մեխանիզմներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 5. ՊԼԱՆԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ

15. Պլանն ակտիվանում է հետևյալ դեպքերում՝

1) երբ ԱՀԿ-ն հայտարարում է սուր շնչառական վարակով պայմանավորված միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ, ապա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն ու կառավարությունը, պետական մարմինները համատեղ կազմակերպում և համակարգում են համավարակի դեմ ուղղված միջոցառումները.

2) սուր շնչառական վարակի ինտեգրացված համաճարակաբանական դիտարկման համակարգերի շրջանակում անսովոր կամ անսպասելի դեպք է արձանագրվում.

3) բժշկական կազմակերպությունների կողմից սուր շնչառական վարակի անսովոր կամ անսպասելի դեպքի մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը (այսուհետ՝ ազգային համակարգող մարմին) հաղորդում է ներկայացվում:

ԳԼՈՒԽ 6. ՄԵԿ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՓՈՒԼԻՑ ՄՅՈՒՍԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱԶԴԱԿԸ

Աղյուսակ 2

NN ը/կ	Գործառնական փուլը	Գործառնական ենթափուլը	Մեկ գործառնական փուլից մյուսին անցնելու ազդակը
1.	Արձագանքում	Պատրաստվածություն	1. Երկրից դուրս՝ այլ երկրում նոր հարուցված շնչառական վարակի դեպքի վերաբերյալ տեղեկատվության ստացում պաշտոնական և ոչ պաշտոնական աղբյուրներից, այլ երկրներից: 2. Ազգային մակարդակում նոր հարուցված շնչառական վարակի դեպքի վերաբերյալ տեղեկատվության ստացում ԱՀԿ-ից: 3. Շնչառական վարակների համաճարակաբանական դիտարկման համակարգի կողմից ազդարարում սուր շնչառական վարակի դեպքերի այնպիսի աճի արձանագրման վերաբերյալ, որը կարող է ծանրաբեռնել առողջապահական համակարգը: 4. ԱՀԿ-ն հայտարարել է հանրային առողջապահական ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակի մասին:
2.		Զսպում	1. Առաջին դեպքի և կլաստերի հայտնաբերում երկրի ներսում 2.Ստացվել է տեղեկատվություն համայնքային կազմակերպություններից անսովոր կամ անսպասելի դեպքի մասին:

			3.Պաշտոնական և ոչ պաշտոնական աղբյուրներից ստացվել է տեղեկատվություն որևէ համայնքում շնչառական վարակի բռնկման վերաբերյալ:
		Վարակի տարածման հսկողություն և հետևանքների մեղմացում	1.Վարակի աճ և զանգվածային տարածում երկրի ներսում 2.Վարակի լայնածավալ տարածում այլ երկրներում 3. Այս փուլում գործողությունները կարող են ընդլայնվել կամ ընդհակառակը՝ կրճատվել՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները՝ 1) հիվանդության շարժընթացը, հիվանդացության, մահացության ցուցանիշները, հոսպիտալացման և մահվան դեպքերը. 2) բնակչության պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշը և վերջինիս վարակի փոխանցման արագության վրա ազդեցությունը. 3) բնակչության առողջության վրա բացասական ազդեցության նվազեցման համար բուժման մեթոդների առկայությունը և դրանց արդյունավետությունը. 4) պոպուլյացիոն ընկալունակության մակարդակը բնակչության տարբեր խմբերում

3.	Վերականգնում	Արձագանքման գործողությունների կրճատում՝ մինչև անհրաժեշտ նվազագույն մակարդակը	1.Հիվանդության դեպքերի թվի, մահերի, հոսպիտալացման դեպքերի թվի նվազման կայուն շարժընթաց 2.Մասնագետների եզրահանգումը, որ համավարակի դեմ կարելի է պայքարել ստանդարտ նախազգուշական միջոցառումներ կիրառելով 3. ԱՀԿ-ն հայտարարել է հանրային առողջապահական ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակի ավարտի մասին:

ԳԼՈՒԽ 7. ՊԼԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN ը/կ	Նպատակը	Գործողությունը/միջոցառումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարող-համակատարողները	Ժամկետը	Ֆինանսա-վորման աղբյուրը
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1. Գործողությունների իրականացում միջհամավարակային կամ միջհամաճարակային ժամանակաշրջանում: Վարակի կանխարգելում և պատրաստվածություն						
1.	Շնչառական վարակով պայմանավորված համաճարակի և համավարակի ժամանակ միջգերատեսչական համագործակցության ապահովում	Վերանայել և անհրաժեշտության դեպքում լրամշակել ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 17-ի N 22-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և գործունեության աշխատակարգը	Միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և գործունեության աշխատակարգը սահմանող վերանայված իրավական ակտի առկայություն	Առողջապահության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	Առնվազն 3 տարին մեկ անգամ և ըստ անհրաժեշտության	Ֆինանսավորում չի պահանջվում:

				Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		
2.	ԱՀԿ-ի կողմից լաբորատոր հետազոտության և հարուցչի բնութագրման արդյունքում ՀՀ-ում շրջանառվող շտամերի վերաբերյալ ԱՀԿ-ին տեղեկատվության տրամադրման ապահովում՝ գրիպի հաջորդ սեզոնի նոր պատվաստանյութի ստեղծման համար	Գրիպի ազգային լաբորատորիայի կողմից գրիպի դրական ալիքվոտային ներկայացուցչական նմուշների տրամադրում ԱՀԿ-ի գիտահետազոտական կենտրոնին՝ լաբորատոր հետազոտության և հարուցչի բնութագրման համար	Միջազգային գիտահետազոտական կենտրոնի կողմից լաբորատոր հետազոտված, բնութագրված նմուշների արդյունքի առկայություն	Առողջապահության նախարարություն	Տարեկան երկու անգամ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով հա-մապատաս-խան ոլորտների գծով նախա-տեսված ընդ-հանուր հատ-կացումների շրջանակում և օրենսդրու-թյամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ

3.	Պահուստային պաշարներով, նյութատեխնիկական միջոցներով ապահովում	Ձևավորել անհրաժեշտ պահուստային պաշարներ (պատվաստանյութերի, արագ ախտորոշման թեստերի, քիմպատրաստուկների, ախտահանիչ նյութերի, սարքերի, սարքավորումների, անհատական պաշտպանության միջոցների և այլն)	Պահուստային պաշարների և նյութատեխնիկական միջոցների առկայություն (պատվաստանյութերի, արագ ախտորոշման թեստերի, ախտահանիչ նյութերի, սարքերի, սարքավորումների, անհատական պաշտպանության միջոցների և այլն)	Առողջապահության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Շուկայի վերահսկողության տեսչական մարմին	Յուրաքանչյուր տարի	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ

4.	Միջգերատեսչական համագործակցության բարելավում, համաճարակի և համավարակի դեմ պայքարի մասնագիտական կարողությունների զարգացում	Շահագրգիռ գերատեսչությունների համագործակցության շրջանակներում իրականացնել համաճարակի և համավարակի ներուժ ունեցող շնչառական վարակների կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների գործադրման վարժանք	Տարեկան առնվազն մեկ իրականացված վարժանք	Առողջապահության նախարարություն ՀՀ մարզպետների աշխատակազմեր Պաշտպանության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն	Տարեկան առնվազն մեկ անգամ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
5.	Շնչառական վարակով պացիենտների բուժման, դեպքերի վարման արդիականացում	Վերանայել և անհրաժեշտության դեպքում միջազգային մոտեցումներին համապատասխանեցնել շնչառական վարակով պացիենտի բուժման և վարման գործելակարգերը	Մշակված և լրամշակված Առողջապահության նախարարի հրամանների առկայություն	Առողջապահության նախարարություն	3 տարին մեկ անգամ և ըստ անհրաժեշտության	Ֆինանսավորում չի պահանջվում:
6.	Պաշտոնական տեղեկատվության տրամադրման գործընթացի բարելավում	Իրականացնել սոցիալական կայքերի, լրատվամիջոցների մշտադիտարկում, վերլուծություններ, հանրությանը ռիսկերի մասին ճշգրիտ տեղեկությունների տրամադրում	Մեդիահաղորդումների թիվ	Առողջապահության նախարարություն	Մշտապես	Ֆինանսավորում չի պահանջվում:

7.	Միջգերատեսչական համագործակցության ապահովում	Պետական կառավարման համակարգի մարմինների կողմից արտակարգ իրավիճակների պլանների վերանայում՝ ներառելով շնչառական վարակների համաճարակի և համավարակի ժամանակ պատրաստվածության և արագ արձագանքման միջոցառումներ	Պետական կառավարման համակարգի մարմինների կողմից վերանայված արտակարգ իրավիճակների պլանների առկայություն	Առողջապահության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Յուրանքաչյուր տարի	Ֆինանսավորում չի պահանջվում:
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2: Գործողությունների իրականացում շնչառական վարակի երկրից դուրս կամ երկրի ներսում սպորադիկ կամ խմբային (կլաստերային) դեպքերի արձանագրման ժամանակաշրջանում						

8.	Կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների համակարգում, միջոցառումների միջգերատեսչական համագործակցության ապահովում	ՀՀ վարչապետի որոշմամբ միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում	Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին ՀՀ վարչապետի որոշման առկայություն	Առողջապահության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՄԱ կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի կողմից հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակի ներուժ ունեցող վտանգի մասին հաղորդման (այսուհետ՝ հաղորդման) դեպքում	Ֆինանսավորում չի պահանջվում:
9.	Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների համակարգ-	Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների ժամանակավոր հաղորդակցման թվային հարթակի ստեղծում	Տվյալների փոխանակման և արձագանքման թվային հարթակի առկայություն	Առողջապահության նախարարություն	Միջգերատեսչական հանձնաժողովի	Տվյալ տարվա ՀՀ պետական

	ման, տվյալների փոխանակման և արձագանքման ապահովում				ստեղծելուն զուգահեռ	բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
10.	Շնչառական վարակների դեպքերի հետագա տարածման կանխման ապահովում	Դեպքերի համաճարակաբանական դիտարկման և համաճարակաբանական հետազոտության իրականացում 24/7 ռեժիմով՝ վարակի կասկածով անձանց, ինչպես նաև հնարավոր վարակակիրների, կոնտակտավորների շփումների ուսումնասիրությանն ուղղված միջոցառումների ձեռնարկման համար	Հայտնաբերված վարակի կասկածով անձանց, ինչպես նաև հնարավոր վարակակիրների, կոնտակտավորների թիվ	Առողջապահության նախարարություն	Հաղորդման դեպքում	Ֆինանսավորում չի պահանջվում:
11.	ՀՀ-ի տարածք շնչառական վարակի ներբերման (ներթափանցման) ու տարածման կանխարգելման ապահովում	Շնչառական վարակի տարածման ռիսկից ելնելով քննարկել կարանտին սահմանելու մասին որոշում ընդունելու հարցը և ըստ անհրաժեշտության ընդունել կարանտին սահմանելու	Կարանտին սահմանելու մասին որոշման առկայություն	Առողջապահության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե	Հաղորդման դեպքում	Ֆինանսավորում չի պահանջվում:

		մասին որոշում՝ համաձայն «Հանրային առողջապահության մասին» օրենքի 17-րդ հոդվածի		Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) ՀՀ մարզպետների աշխատակազմեր Ազգային անվտանգության ծառայություն Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		
12.	Պետական սահմանի անցման կետերում շնչառական վարակի ներբերման (ներթափանցման) ու տարածման կանխարգելման վերահսկողության ապահովում	Քննարկել և անհրաժեշտության դեպքում առաջարկություն ներկայացնել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին պետական սահմանի անցման կետերում վերահսկողություն իրականացնելու վերա-	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին պետական սահմանի անցման կետերում ժամանակավորապես տեղակայելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման առկայություն	Առողջապահության նախարարություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Պետական եկամուտների կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Հաղորդման կամ արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների

		բերյալ՝ համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 1584-Ն որոշման		(քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն	պայմանավորված կարանտին սահմանելու դեպքերում	գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
13.	Կոնտակտավորների հսկողության հետ կապված զբոսաշրջային օպերատորների և ավիաուղիների հետ կապի մեխանիզմների ապահովում	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 219-Ն որոշմամբ սահմանված միջոցառումների իրականացում պետական սահմանի անցման կետերում	Կոնտակտավորների լրացված հասցեական քարտեր	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Պետական եկամուտների կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն Առողջապահության նախարարություն	Հաղորդման կամ արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքերում	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
14.	Շնչառական վարակի դեպքերի վաղ հայտնաբերման ապահովում	ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների առաջարկների հիման վրա մշակել և առողջապահության	Առողջապահության նախարարի հրամանի առկայություն	Առողջապահության նախարարություն	Հաղորդման դեպքում	Ֆինանսավորում չի պահանջվում:

		նախարարի հրամանով հաստատել նոր շնչառական վարակի դեպքի ստանդարտ բնորոշումները				
15.	Բժշկական կազմակերպություններում վարակի տարածման կանխման ապահովում	ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների առաջարկների հիման վրա մշակել և առողջապահության նախարարի հրամանով հաստատել բժշկական կազմակերպություններում վարակի կանխարգելման օրինակելի ծրագիր	Վարակի կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին Առողջապահության նախարարի հրամանի առկայություն	Առողջապահության նախարարություն	Հաղորդման դեպքում	Ֆինանսավորում չի պահանջվում:
16.	Լաբորատոր կարողությունների ապահովում	ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների առաջարկների հիման վրա մշակել և Առողջապահության նախարարի հրամանով հաստատել շնչառական վարակի նմուշառման և լաբորատոր հետազոտության գործողությունների ստանդարտ ընթացակարգեր	Առողջապահության նախարարի հրամանի առկայություն	Առողջապահության նախարարություն	Հաղորդման կամ արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքերում	Ֆինանսավորում չի պահանջվում:
17.	Լաբորատոր հետազոտությունների իրականացման հասանելիության ապահովում	Աշխատանքներ իրականացնել ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում լաբորատոր անհրա-	Ձեռք բերված լաբորատոր պարագաների, թեստերի, հավաքածուների թիվ	Առողջապահության նախարարություն	Երկրի տարածքում դեպք արձանագրելիս	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների

		ժեշտ պարագաների, հավաքածուների, թեստերի ձեռքբերման ուղղությամբ				գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
18.	Անսովոր կամ անսպասելի շնչառական վարակի հայտնաբերման ապահովում	Անսովոր կամ անսպասելի շնչառական վարակի դեպքի ստանդարտ բնորոշման համաձայն լաբորատոր հետազոտված նմուշների տրամադրում ԱՀԿ-ի կողմից առաջարկվող գիտահետազոտական կենտրոն՝ լաբորատոր հետազոտության և վերահաստատման համար	Տրամադրված նմուշների թիվ	Առողջապահության նախարարություն	Երկրի տարածքում դեպք արձանագրելիս	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
19.	Համաճարակի և համավարակի պայմաններում առողջապահական համակարգի	Բժշկական կազմակերպություններում մահճակալների թվի, համապատասխան մասնա-	Բժշկական կազմակերպություններում մահճակալների, համապատասխան մասնագետների, սարքերի, սարքավորումների,	Առողջապահության նախարարություն	Հաղորդման կամ արտակարգ իրավիճակի	Տվյալ տարվա ՀՀ պետական

	պատրաստվածության ապահովում	գետների թվի, սարքերի, սարքավորումների, անհրաժեշտ դեղերի, նյութատեխնիկական միջոցների գնահատում և ըստ անհրաժեշտության համալրում	անհրաժեշտ դեղերի, նյութատեխնիկական միջոցների առկայություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքերում	բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
20.	Բնակչության համար բժշկական օգնության և սպասարկման նպատակով առողջապահական համակարգի հասանելիության ապահովում	Մշակել արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգ՝ ապահովելու համար բժշկական օգնության և սպասարկման բոլոր տեսակները և դրանց ծավալները	Առողջապահության նախարարի հրամանի առկայություն	Առողջապահության նախարարություն	Հաղորդման կամ արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքերում	Ֆինանսավորում չի պահանջվում:
21.	Առողջապահական համակարգի	Մշակել և առողջապահության նախարարի հրամանով հաստատել շնչառական վարակով	Առողջապահության նախարարի հրամանի առկայություն	Առողջապահության նախարարություն	Հաղորդման կամ արտակարգ	Ֆինանսավորում չի պահանջվում:

	պատրաստվածության ապահովում	կասկածելի պացիենտների տեսակավորման, հաստատված պացիենտների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը և համաճարակի և համավարակի ողջ ընթացքում լրամշակել՝ ելնելով առողջապահական համակարգի ծանրաբեռնվածությունից		Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքերում	
22.	Հանրային իշխանության մարմինների աշխատանքի կազմակերպման ընթացքում շնչառական վարակների կանխարգելման ապահովում	Մշակել և սահմանված կարգով առողջապահության նախարարի հրամանով հաստատել հանրային իշխանության մարմինների աշխատանքի կազմակերպման ընթացքում շնչառական վարակների կանխարգելմանը ներկայացվող պահանջները սահմանող իրավական ակտ	Առողջապահության նախարարի հրամանի առկայություն	Առողջապահության նախարարություն	Հաղորդման կամ արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքերում	Ֆինանսավորում չի պահանջվում:
23.	Մեկուսացման և օբսերվացիայի ենթակա անձանց համար համապատասխան վայրի ապահովում	Անհրաժեշտության դեպքում շահագրգիռ գերատեսչությունների համագործակցության շրջանակներում որոշել անձանց մեկուսացման և օբսերվացիայի վայրերը և դրանց ցանկերը հաստատել Առողջապահության նախարարի հրամանով	Առողջապահության նախարարի հրամանի առկայություն	Առողջապահության նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ մարզպետների աշխատակազմ	Երկրի տարածքում դեպք արձանագրելիս	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր

						հատկացում-ների շրջանակում և օրենսդրու-թյամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
24.	Միջազգային համագոր-ծակցության ապահովում	Ազգային համակարգող մարմնի և ԱՀԿ-ի հաղորդակցման կե-տերի միջև կանոնավոր կապի ապահովում	ԱՀԿ-ին ներկայացված հաղոր-դումների թիվ	Առողջապահության նախարարություն	Երկրի տա-րածքում դեպք արձանա-գրելիս	Ֆինանսավո-րում չի պահանջվում:
25.	Վարակի կասկածով անձանց, ինչպես նաև վարակակիրների, կոնտակտավորների բժշկական օգնության և սպասարկման ապահովում	Կազմակերպել և իրականացնել վարակի կասկածով անձանց, ինչպես նաև վարակակիրների, կոնտակտավորների բժշկական հսկողություն	Բժշկական հսկողության տակ գտնվող անձանց թիվ	Առողջապահության նախարարություն	Երկրի տարածքում դեպք արձանա-գրելիս	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապա-տասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացում-ների շրջանակում և օրենսդրու-թյամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ

26.	Շնչառական վարակի դեպքերի վաղ հայտնաբերման ապահովում	Շնչառական վարակի դեպքի ստանդարտ բնորոշմանը համապատասխանող անձանց լաբորատոր հետազոտությունների իրականացում	Լաբորատոր հետազոտված անձանց թիվ	Առողջապահության նախարարություն	Երկրի տարածքում դեպք արձանագրելիս	Ֆինանսավորում չի պահանջվում:
27.	Պետական սահմանի անցման կետերում հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող մարմինների համագործակցության ապահովում	Պետական սահմանի անցման կետերում կազմակերպել և իրականացնել բժշկական, կանխարգելիչ և սահմանափակող միջոցառումներ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշման համաձայն	Պետական սահմանի անցման կետերում բացահայտված դեպքերի թիվ	Պետական եկամուտների կոմիտե Ներքին գործերի նախարարություն Առողջապահության նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն	Երկրի տարածքում դեպք արձանագրելիս	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
28.	Բնակչության շրջանում շնչառական վարակի տարածման, ծանր և մահվան դեպքերի կանխման ապահովում	Աշխատանքներ տանել շնչառական վարակի պատվաստանյութերի ձեռքբերման ուղղությամբ՝ համագործակցելով ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ	Ձեռք բերված պատվաստանյութերի քանակ	Առողջապահության նախարարություն	Երկրի տարածքում դեպք արձանագրելիս	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների

						գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
29.	Բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում, հասարակության շրջանում ճիշտ տեղեկատվության տարածում և ապատեղեկատվության կանխում	Իրականացնել բնակչության լայնածավալ իրազեկում՝ շնչառական վարակի տարածման, կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ՝ զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական կայքերի միջոցով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով պետական կառավարման այլ մարմինների	Իրազեկման նյութերի, մեդիահաղորդումների թիվ	Առողջապահության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն	Երկրի տարածքում դեպք արձանագրելիս	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3. Գործողությունների իրականացում շնչառական վարակի համայնքում կայուն փոխանցման ժամանակաշրջանում						

30.	Արձագանքման ապահովում	Արտակարգ իրավիճակների առողջապահության բնագավառի գործունեության պլանով սահմանված միջոցառումների իրականացում՝ համաձայն Առողջապահության նախարարի 2021 թվականի հունիսի 14-ի N 48-Ն հրամանի պահանջների	Իրականացված միջոցառումներ	Առողջապահության նախարարություն	Դեպքերի կայուն փոխանցման ժամանակահատվածում	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
31.	Բնակչության անընկալունակության ապահովում	Համապատասխան պատվաստանյութի առկայության դեպքում իմունականխարգելման ազգային ծրագրի ակտիվացում՝ ներառյալ պատվաստանյութի բնութագրերի հիման վրա գնման, անվտանգ պահպանման և բաշխման հարցերի քննարկումը	Պատվաստված անձանց թիվ	Առողջապահության նախարարություն	Դեպքերի կայուն փոխանցման ժամանակահատվածում	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ,

						ոչ բյուջետային միջոցներ
32.	Կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների ապահովում՝ միջազգային մոտեցումներին և լավագույն փորձին համապատասխան	ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների նոր առաջարկների հիման վրա շնչառական վարակի կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ իրավական ակտերի, մեթոդական ուղեցույցերի, գործելակարգերի լրամշակում և դրանց վերաբերյալ բուժաշխատողների վերապատրաստում	Լրամշակված իրավական ակտերի, վերապատրաստված բուժաշխատողների թիվ	Առողջապահության նախարարություն	Դեպքերի կայուն փոխանցման ժամանակահատվածում	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
33.	Վարակի տարածման կանխման ապահովում	Շարունակել վարակի կասկածով անձանց, ինչպես նաև հնարավոր վարակակիրների, կոնտակտավորների հայտնաբերման գործընթացը	Հայտնաբերված վարակի կասկածով անձանց, ինչպես նաև հնարավոր վարակակիրների, կոնտակտավորների թիվ	Առողջապահության նախարարություն	Դեպքերի կայուն փոխանցման ժամանակահատվածում	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրու-

						թյամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
34.	Վարակի տարածման կանխման նպատակով միջազգային մոտեցումներին համապատասխան կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների իրականացման համար իրավական կարգավորման ապահովում	Մշակել կարանտինի որոշումից բխող կանխարգելիչ և հակահամաճարակային, ինչպես նաև սահմանափակող միջոցառումներ՝ ապահովելով դրանց կիրառման նկատմամբ վերահսկողությունը (հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու, ապրանքների փոխադրման, ուսումնական հաստատությունների գործունեության, հանրային իշխանության մարմիններում և այլ հաստատություններում սահմանափակումների վերաբերյալ) և ելնելով համաճարակային և համավարակային իրավիճակի վերլուծություններից և գնահատումից լրամշակել դրանք՝ ընդլայնելով կամ կրճատելով միջոցառումների շրջանակը:	Կանխարգելիչ և հակահամաճարակային, սահմանափակող միջոցառումները կարգավորող իրավական ակտերի թիվ	Առողջապահության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն	Դեպքերի կայուն փոխանցման ժամանակահատվածում	Ֆինանսավորում չի պահանջվում:

				Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		
35.	Շնչառական վարակի դեպքերի վաղ հայտնաբերման ապահովում	Բնակչության տարբեր խմբերի համար լաբորատոր հետազոտությունների կազմակերպում և իրականացում	Թեստավորված անձանց թիվ	Առողջապահության նախարարություն	Դեպքերի կայուն փոխանցման ժամանակահատվածում	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ
36.	Բնակչության շրջանում տեղեկացվածության բարձր մակարդակի՝ առողջապահական իրավիճակի, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների և վարքագծային մոտեցումների ապահովում	Բնակչության շարունակական իրազեկում՝ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով, սոցիալական կայքերով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով պետական կառավարման այլ մարմինների: Պարբերաբար մամուլի ասուլիսների անցկացում, որոնք անհրաժեշտության դեպքում ուղղված են բնակչության թիրախային խմբերին	Իրազեկման նյութերի, մեդիահաղորդումների թիվ	Առողջապահության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (քաղաքացիական ավիացիայի կոմիտե) Ազգային անվտանգության ծառայություն	Դեպքերի կայուն փոխանցման ժամանակահատվածում	Ֆինանսավորում չի պահանջվում:

				Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4. Գործողություններ համաճարակի և համավարակի վերականգնման ժամանակաշրջանում						
37.	Պատրաստվածության և արագ արձագանքման պլանում միջազգային նոր մոտեցումներին համահունչ և լավագույն փորձի հիման վրա նոր սպառնալիքների պատրաստվածության և արագ արձագանքման ապահովում	Համաճարակի և համավարակի ընթացքում պլանի գործողությունների գնահատման իրականացում՝ համաճարակից քաղված լավագույն փորձը և դասերը բացահայտելու համար ու պլանի վերանայում և լրամշակում	Լրամշակված պլանի առկայություն	Առողջապահության նախարարություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին	Համավարակի կամ համաճարակի վերականգնման ժամանակահատված	Ֆինանսավորում չի պահանջվում:
38.	Համաճարակաբանական դիտարկման համակարգի կատարելագործում	Լրամշակել շնչառական վարակի համաճարակաբանական դիտարկման համակարգի գործադրման ոլորտային իրավական ակտերը՝ նոր շնչառական	Ինտեգրացված համաճարակաբանական դիտարկման համակարգ	Առողջապահության նախարարություն	Համավարակի կամ համաճարակի վերականգնման	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով համապատասխան ոլորտների

		վարակը համակարգում ինտե-գրելու համար			ժամանա-կահատված	գծով նախա-տեսված ընդհա-նուր հատկա-ցումների շրջանակում և օրենսդրությամբ չարգելված այլ, ոչ բյուջետային միջոցներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ